ԵՐԵՎԱՆԻ
ԿԵՆԴԱՆԱԲԱՆԱԿԱՆ
ԱՅԳԻ

ԵԿ-039-2023
12.05.2023թ.

«ԳԱՍՊԱՐ 06» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ
ԿԱՐԻՆԵ ԳԱՍՊԱՐՅԱՆԻՆ
/ՀՀ, Զինավան 5/ԴՕՍ3/37 բն, Հովտաշատ 0813, Հովտաշատ
Արարատ Հայաստան, հեռ.՝ +37477829911/

Հարգելի՛ տիկին Գասպարյան,

«Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ի /այսուհետ նաև՝ Այգի/ կարիքների համար 2023 թվականի փետրվարի 8-ին հայտարարված սննդամթերքի և կերերի ձեռքբերման ԵՔԿԱ-ԳՀԱՊՁԲ-23/7 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) շրջանակներում 1-4-րդ և 6-8-րդ չափաբաժինների մասով, որպես ընտրված (հաղթող) մասնակից է ճանաչվել «ԳԱՍՊԱՐ 06» ՍՊԸ-ն (ՀՎՀՀ՝ 04444865, գործունեության հասցե՝ ՀՀ, Զինավան 5/ԴՕՍ3/37 բն, Հովտաշատ 0813, Հովտաշատ Արարատ Հայաստան, հեռ.՝ +37477-829911, էլեկտրոնային հասցե՝ maria210909@mail.ru), որի հետ 16.03.2023թ-ին կնքվել է ԵՔԿԱ-ԳՀԱՊՁԲ-23/7-1 ծածկագրով ապրանքի մատակարարման պետական գնման պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր), որի շրջանակներում, հետագայում՝ ֆինանսական միջոցների հատկացմամբ պայմանավորված՝ 20.03.2023թ-ին կնքվել է նաև ֆինանսական միջոցների հատկացման և վճարման ու գնման ժամանակացույցների հաստատման համաձայնագիր:

25.04.2023թ-ին Ձեր կողմից ներկայացվել է գրություն, համաձայն, որի չեք կարող կատարել Պայմանագրերով ստանձնված պարտավորությունները, քանի որ գտնվում եք լուծարային գործընթացում:

Հաշվի առնելով վերոգրյալը, ինչպես նաև՝ այն հանգամանքը, որ «ԳԱՍՊԱՐ 06» ՍՊԸ-ն թույլ է տվել պայմանագրային պարտավորությունների խախտում, իսկ Այգու կարիքների համար սնունդի

ՀՀ, Երևան 0025,
Մյասնիկյան 20
+374 10 562 362
www.zoo.am
info@zoo.am

ձեռքբերումն ունի կենսական նշանակություն և կարող է հանգեցնել կենդանատեսակների անկումների և ամբողջովին խաթարել Այգու գործունեության բնականոն ընթացքը, Այգու կենդանիների կերակրման առաջնահերթությամբ և հրատապությամբ պայմանավորված, «ԳԱՍՊԱՐ 06» ՍՊԸ-ի հետ կնքված ապրանքի մատակարարման ԵՔԿԱ-ԳՀԱՊՁԲ-23/7-1 ծածկագրով պայմանագրի չմատակարարված քանակությունների մասով նշյալ Պայմանագիրը միակողմանի լուծվել է:

Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջները՝ առաջարկում ենք 10 աշխատանքային օրվա ընթացում՝ մինչև ս.թ. մայիսի 25-ը ներառյալ, ապահովել ԵՔԿԱ-ԳՀԱՊՁԲ-23/7-1 ծածկագրով պայմանագրի չմատակարարված քանակությունների մասով 97,000.00 (իննսունյոթ հազար) ՀՀ դրամ՝ պայմանագրի կատարման ապահովման համար և 145,500.00 (մեկ հարյուր քառասունհինգ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ՝ որակավորման ապահովման համար, վճարների գանձումը:

Վերոնշյալի վերաբերյալ Այգին դիմել է Ձեզ սպասարկող բանկին՝ «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ին:

Միաժամանակ հայտնում ենք, որ վերոնշյալ գանձումների անհնարինության դեպքում Այգին վերոգրյալի վերաբերյալ տեղեկատվությունը տրամադրելու է լիազորված մարմնին՝ ՀՀ ֆինանսների նախարարությանը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջները կիրառելու նպատակով:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝
«ԵՐԵՎԱՆԻ ԿԵՆԴԱՆԱԲԱՆԱԿԱՆ ԱՅԳԻ» ՀՈԱԿ-Ի
ՏՆՕՐԵՆԻ ՏԵՂԱԿԱԼ ԳԻՏԱԿԱՆ ԳԾՈՎ
ՏՆՕՐԵՆԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐՈՂ **ԱՇՈՏ ԱՍԼԱՆՅԱՆ**